Գ.2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/3-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ/4

N 11/249-2024

ք. Երևան «26» 02 2024 թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մուրադյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ու ԿԱԹՍԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **7 000 000 (յոթ միլիոն)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԱԾ	**«ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ**
Ք. Երևան, Նալբանդյան104	**ք. Երևան, Լյուքսեմբուրգի 2-րդ նրբանցք 5-22**
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի	**Ակբա բանկ ԲԲԸ**
գործառնական վարչություն	
Հ/հ 900011301067	**Հ/հ 220463334148000**
ՀՎՀՀ 01507079	**ՀՎՀՀ 00933437**
Տնօրենի տեղակալ	**Տնօրեն**
Գ. Մարտիրոսյան	**Ա. Մուրադյան**

Հավելված N 1
«26» 02 2024 թ. կնքված
ԳՀԱՇ-ԷԱՃԱՊՁԲ-24/249 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
5	50111260/501	Էլեկտրական բաշխիչ վահանակների վերանորոգում և փոխարինում, անհրաժեշտ դետալների փոխարինում, կարգաբերում: 0,4 և 0,22 կՎ լարման մալուխների հարդարում, ծայրապանակների տեղադրում: 0,4 և 0,22 կՎ լարման մալուխները վաքերի մեջով անցկացման ծառայություններ: **Չափաբաժին N5**	դրամ	3000000	1	ՀՀ ԱԱԾ ստորա-բաժանումներ	2024թ. դեկտեմբեր 20
6	50531110/501	Ջեռուցման կաթսաների վերանորոգում, անհրաժեշտ պահեստամասերի փոխարինում, տեխսպասարկում, կարգաբերում : **Չափաբաժին N6**	դրամ	4000000	1	ՀՀ ԱԱԾ ստորա-բաժանումներ	2024թ. դեկտեմբեր 20

Ծառայությունների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ծառայությունն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատուցված ծառայության թերություններ, ապա պայմանագրի կողմը պարտավոր է իր հաշվին՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱԱԾ
Ք. Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ

ԿԱՏԱՐՈՂ
«ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ
ք. Երևան, Լյուքսեմբուրգի 2-րդ նրբանցք 5-22
Ակբա բանկ ԲԲԸ

Հ/հ 220463334148000
ՀՎՀՀ 00933437
Տնօրեն Ա. Մուրադյան

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ և ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐԻ ԳՆԵՐԸ

Չափաբաժին N 5

Չափաբաժնի համարը	Բնութագրող ցուցանիշները	Չափման միավորը	Ծառայության առավելագույն միավոր գինը (դրամ)
5	ՌՊՍ-630Ա տիպի բաժանիչ ПН-2-630А հալուն ապահովիչներով	հատ	114000
	ПР11-3108-21 400А բաշխիչ վահանի մոնտաժում	հատ	480000
	Բաշխիչ վահանի մոնտաժում S/DB-1-1	հատ	159000
	Բաշխիչ վահանի մոնտաժում S/DB-1-2	հատ	159000
	Բաշխիչ վահանի մոնտաժում S/DB-1-6	հատ	255000
	Բաշխիչ վահանի մոնտաժում S/DB-1-7	հատ	223000
	Բաշխիչ վահանի մոնտաժում S/DB-2-1	հատ	103000
	Բաշխիչ վահանի մոնտաժում S/DB-2-2	հատ	299000
	Բաշխիչ վահանի մոնտաժում S/DB2-3DB	հատ	87500
	Ծայրապանակի տեղադրում ТА -11 (4x70 մմ² մալուխի համար)	հատ	1400
	Ծայրապանակի տեղադրում ТА -9 (4x50 մմ² մալուխի համար)	հատ	1330
	Ծայրապանակի տեղադրում ТА -7 (4x25 մմ² մալուխի համար)	հատ	1290
	Ծայրապանակի տեղադրում ТА -8(1x35 մմ² մալուխի համար)	հատ	1300
	Ծայրապանակի տեղադրում ТА -7(1x25 մմ² մալուխի համար)	հատ	1285
	Ծայրապանակի տեղադրում ТА -5(1x16 մմ² մալուխի համար)	հատ	1275
	Ծալքավոր խողովակի մոնտաժում Ø20մմ	մ	135
	Բռնիչ դյուբելով ծալքավոր խողովակի համար	հատ	47
	Սեղմակներ 222-413 (սեղմակների քանակ 3)	հատ	270
	Բաշխիչ տուփ 100x100x50 մոնտաժում	հատ	1240
	Տպիչ մալուխների համարակալման համար	հատ	21000
	Մալուխային վաքի մոնտաժում 200x50մմ L=3մ	հատ	11100
	Մալուխային վաքի մոնտաժում 200x50մմ L=2մ	հատ	7650
	Մալուխային վաքի մոնտաժում 100x50մմ L=3մ	հատ	8400

Մալուխային վաքի մոնտաժում 100x50մմ L=2մ	հատ	6900
Անկյուն 90° հորիզոնական 100մմ	հատ	6600
Անկյուն 90° հորիզոնական 200մմ	հատ	9600
Անկյուն 90° ուղղահայց 100մմ	հատ	7600
Անկյուն 90° ուղղահայց 200մմ	հատ	9100
Փոխանակման հորիզոնական անկյուն 45° 100x50մմ	հատ	15600
T-նման ճյուղավորում 100մմ	հատ	7300
T-նման ճյուղավորում 200մմ	հատ	8300
Պարզեցված ռեդուկցիա	հատ	9600
Մետաղական պրոֆիլ 300մմ	հատ	1140
Խփովի խարիսխ M10	հատ	160
Գամասեղ DIN975/976 M10x2000	հատ	560
Մանեկ DIN 934M10	հատ	15
Տափօղակ DIN 125	հատ	15
Ալյումինե մալուխ ԱԲԲԳ 4x70մմ² մոնտաժ վաքով	մ	3700
Ալյումինե մալուխ ԱԲԲԳ 4x50մմ² մոնտաժ վաքով	մ	2685
Ալյումինե մալուխ ԱԲԲԳ 4x25մմ² մոնտաժ վաքով	մ	1430
Ալյումինե մալուխ ԱԲԲԳ 4x50մմ² մոնտաժ պատով ճարմանդով	մ	3400
էլ. կաբել 4*16 պղնձյա երկտակ մեկուսացված, բազմաջիղ	մ	5900
էլ. կաբել 2*1.5 պղնձյա երկտակ մեկուսացված, բազմաջիղ	մ	405
էլ. կաբել 2*2.5 պղնձյա երկտակ մեկուսացված, բազմաթել	մ	590
Միաֆազ էլ 32 Ա հզորության ավտոմատի տեղադրում	հատ	2400
Միաֆազ էլ 25 Ա հզորության ավտոմատի տեղադրում	հատ	2250
4 հատ ավտոմատի տեղադրման համար պլաստմասե տուփ արտաքին տեղադրման	հատ	3700
6 հատ ավտոմատի տեղադրման համար պլաստմասե տուփ արտաքին տեղադրման	հատ	4450
Էլ. վարդակ արտաքին մոնտաժի համար 220Վ, 16Ա	հատ	1300
Անջատիչ մեկստեղնավոր արտաքին մոնտաժի 220Վ, 6Ա	հատ	1300
Անջատիչ երկստեղնավոր արտաքին մոնտաժի 220Վ, 6Ա	հատ	1500
Արտաքին լուսավորության լուսատուի տեղադրում 20 – 50 վտ (առանց լուսատու)	հատ	3500
Անցքերի բացում՝ 10-20 սմ հաստությամբ պատի	հատ	3400
Անցքերի բացում՝ 40-50 սմ հաստությամբ պատի	հատ	4800
Հանրագումարային գին	**ՀՀ դրամ**	**2 066 422**

Չափաբաժին N6

Չափաբաժնի համարը	Բնութագրող ցուցանիշները	Չափման միավորը	Ծառայության առավելագույն միավորի գինը (ՀՀ դրամ)
1	2	3	4
6	Օդամուղի տեղադրում	հատ	77000
	Ջերմափոխանակիչի տեղադրում (մեծ)	հատ	145000
	Ջերմափոխանակիչի տեղադրում (փոքր)	հատ	65000
	Ռեդուկտորի տեղադրում	հատ	73000
	Ճնշման անջատիչի (пресcостат) տեղադրում	հատ	24000
	Պոմպ տեղադրում	հատ	65000
	Ջրի հոսքի տվիչի տեղադրում	հատ	22000
	3 բար փականի տեղադրում	հատ	18000
	Տվիչների տեղադրում	հատ	14000
	Փականի տեղադրում	հատ	20000
	Կաթսայի ղեկավարման էլ.վահանակ (плата)	հատ	81000
	Պլաստմասե դետալների մոնտաժում	հատ	45000
	Եռաքայլ փականի տեղադրում	հատ	55000
	Ընդարձակման բաքի տեղադրում	հատ	70000
	Ներդիրների մոնտաժում	հատ	25000
	Մեկ անգամյա տեխսպասարկում	հատ	25000
	Ջրատաքացման կաթսայի ապամոնտաժում, 150 կվտ ջերմաարտադրության	լ-կ	195000
	Ջրատաքացման կաթսայի ապամոնտաժում, 300 կվտ ջերմաարտադրության	լ-կ	203000
	Դատարկման սողնակային փականների ապամոնտաժում,Φ50մմ	լ-կ	1000
	Պողպատե խողովակաշարի ապամոնտաժում, Φ57մմ	մետր	600
	Սողնակային փականների ապամոնտաժում, Φ80մմ	լ-կ	4000
	Գազայրիչային մեկ գազայրիչով սարքավորումների ապամոնտաժում 150կվտ հզ.	լ-կ	24000
	Կաթսայի նորոգման համար այրման խցի և ճակատային մասերի և ծխահեռացման խողովակների ապամոնտաժում	լ-կ	147000
	Կաթսայի ճակատային մասերի վերականգնում՝ 8մմ հաստ.,	հատ	496000

	800*1200 մմ չափերի պողպատե թիթեղով		
	Կաթսայի նորոգման՝ այրման խցի համար 8մմ հաստ., 1.9մ² պողպատե թիթեղ	հատ	507000
	Կաթսայի ծխահեռացման DN=51x3մմ պողպատե խողովակների մոնտաժում	լ-կ	659000
	Կաթսայի ջերմամեկուսացում 5սմ հաստ. փայլաթիթեղապատ հանքաբամբակով	լ-կ	23000
	Մետաղական ջրատաքացուցիչ կաթսայի մոնտաժում	լ-կ	56000
	Պողպատե խողովակաշարի մոնտաժում, Φ57մմ	մետր	9500
	Սողնակային փականների մոնտաժում, Φ80մմ	լ-կ	132400
	Դատարկման սողնակային փականնրի մոնտաժում,Φ50մմ	լ-կ	72400
	Պողպատե խողովակաշարի մոնտաժում, Φ57մմ	մետր	9500
	Ջրա/շոգե/տաքացման պողպատե, հրակայուն խողովակավոր, 150կվտ հզորության, կաթսայի համակարգերի համատեղ աշխատանքների /ավտոմատ համակարգ, ՀՁՍ և այլ/ գործարկում և կարգաբերում	համակարգ	108000
	Ջրա/շոգե/տաքացման պողպատե, հրակայուն խողովակավոր, 300կվտ հզորության, կաթսայի համակարգերի համատեղ աշխատանքների /ավտոմատ համակարգ, ՀՁՍ և այլ/ գործարկում և կարգաբերում	համակարգ	119000
	Հանրագումարային գին	**ՀՀ դրամ**	**3 590 400**

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

1. **N 5 Չափաբաժնի մասով.**
   ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ=1980000/2066422xԾxՔ, որտեղ՝
   ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.
   ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է = 1980000 ՀՀ դրամին.
   ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է = 2066422 ՀՀ դրամին.
   Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
   Ք-ն մատուցված ծառայության քանակն է:
2. **N 6 Չափաբաժնի մասով.**
   ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ=3120000/3590400xԾxՔ, որտեղ՝
   ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.
   ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է = 3120000 ՀՀ դրամին.
   ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է = 3590400 ՀՀ դրամին.
   Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
   Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

-Վերանորոգման համար օգտագործվող նյութերը և փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն նոր և չօգտագործված:
-Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն գործարանային և չոգտագործված վիճակում:
-Վերը նշված միավոր արժեքների մեջ ներառված են օգտագործվող նյութերը:
- Թերի վերանորոգման հետևանքով խափանված սարքավորումը կրկնակի վերանորոգվում է ծառայություն մատուցողի հաշվին:
-Մատուցման ժամկետը սահմանվում է պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից 4 օրացույցային օրվա ընթացքում, բացառությամբ վերանորոգումն իրականացնելու համար պահեստամասի բացակայության և դրա պատվերի ուշացման դեպքերի, որի ժամանակ Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել այլ ժամկետ, առաջին մատուցման ժամկետը պահանջի օրվանից հաշված 20 օրացույցային օրվա ընթացքում:
-Ծառայությունների գնումը կիրականացվի 1-ից 4-րդ եռամսյակների ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2024թ:
-Վերանորոգվող սարքավորումը տեղում վերանորոգելու անհնարինության դեպքում, տեղափոխումը ԱԱԾ ստորաբաժանումներից վերանորոգող կազմակերպություն և հետ ԱԱԾ ստորաբաժանում կատարվում է ՀՀ ԱԱԾ միջոցներով և հաշվին:

Հավելված N 2
«26» 02 2024 թ. կնքված
ՄՄ/249-2024 ծածկագրով պայմանագրի

ՀՀ դրամ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության															
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
5	50111260/501	Էլեկտրական սարքերի վերանորոգման ծառայություններ	0	0	300000	600000	900000	1200000	1500000	1800000	2100000	2400000	2700000	3000000	3000000
6	50531110/501	Կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայություններ	0	0	400000	800000	1200000	1600000	2000000	2400000	2800000	3200000	3600000	4000000	4000000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱԱԾ
Ք. Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ

ԿԱՏԱՐՈՂ
«ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ
ք. Երևան, Լյուքսեմբուրգի 2-րդ նրբանցք 5-22
Ակբա բանկ ԲԲԸ

Հ/հ 220463334148000
ՀՎՀՀ 00933437
Տնօրեն
Ա. Մուրադյան

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն